

Կ Ա Ր Գ

ԷԼԵԿՏՐԱԵՆԵՐԳԻԱՅԻ (ՀՉՈՐՈՒԹՅԱՆ) ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

Սույն կարգով կանոնակարգվում են Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում (այսուհետև՝ ԷՄԾ) էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման գործառույթները:

1. Կարգում օգտագործված իիմնական հասկացությունները

Շուկայի մասնակից՝	ԷՄԾ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության կամ բաշխման կամ հաղորդման լիցենզիա ունեցող անձ.
Հաշվարկային կենտրոն՝	ԷՄԾ-ին հաշվարկային կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.
Հաշվառման համակարգ՝	ԷՄԾ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգ.
Հաշվառում՝	Առևտրային հաշվառման ավտոմատացված համակարգի միջոցով կամ հաշվարկային եղանակով էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառում.
Հաշվառքի կետ՝	Պայմանագրում ամրագրված չափիչ համալիրով կահավորված կետ.
Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման միջոցներ (այսուհետև՝ Հաշվառման միջոցներ)՝	Հաշվառման համակարգի և Չափիչ համալիրների համախումբը.
Չափիչ համալիր՝	Էլեկտրաէներգիայի հաշվիչի, հոսանքի և լարման տրանսֆորմատորների համախումբ.
Պայմանագիր՝	ԷՄԾ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի կամ ծառայությունների մատուցման պայմանները սահմանող փաստաթուղթ:

2. Ընդհանուր դրույթներ

- 2.1 ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) Հաշվառման միջոցների տեղադրման և շահագործման գործընթացների կողրդինացումն իրականացնում է Հաշվարկային կենտրոնը:
- 2.2 Հաշվարկային կենտրոնը ԷՄՇ-ում էլեկտրաէներգիայի (հզորության) Հաշվառումն իրականացնում է Հաշվառման համակարգի միջոցով:
- 2.3 Հաշվարկային կենտրոնի և Շուկայի մասնակիցների փոխհարաբերությունները կանոնակարգվում են “Էներգետիկայի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, գործունեության լիցենզիայով և սույն կարգով:

3. Հաշվառման համակարգը

3.1 Հաշվառման համակարգը կիրառվում է էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառումն իրականացնելու նպատակով: Սույն կարգի համաձայն Հաշվառման համակարգի միջոցով ստացված հաշվառման տվյալներն օգտագործվում են գնված, հաղորդված և (կամ) վաճառված էլեկտրաէներգիայի (հզորության) քանակի հաշվառման գործընթացում:

3.2 Համակարգում գրանցված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվիչները պետք է լինեն Հայաստանի Հանրապետությունում էլեկտրաէներգիայի (հզորության) առևտրային հաշվառման համար թույլատրվող ստատիկ հաշվիչներին ներկայացվող պահանջները բավարարող Վատտ ժամերի ստատիկ ABB Euro Alpha կամ նույնատիպ հաշվիչներ՝ IEC1107OP (օպտիկական պորտ՝ և RS485 ինտերֆեյսով):

3.3 Համակարգում ընդգրկված էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվիչների (այսուհետև՝ Հաշվիչներ) հիշողության 30 րոպե միջակայքում գրանցված էլեկտրաէներգիայի քանակը համարվում է առևտրային մեծություն:

3.4 Հաշվառման համակարգի ժամացույցները պետք է պարբերաբար ճշգրտվեն Հաշվարկային կենտրոնի գլխավոր վարչարարի (Հաշվարկային կենտրոնի կողմից նշանակված պատասխանատու անձ) կողմից:

3.5 Հաշվառման համակարգն ընդգրկում է՝

Ա) համակարգի առաջնային տվյալների հավաքագրման սերվերը (այսուհետև՝ կոմունիկացիոն սերվեր[¤],

Բ) տվյալների մշակման և հաշվարկման սերվերը (այսուհետև՝ գլխավոր սերվեր[¤],

Գ) հանգուցային սերվերները (տվյալների հավաքման և հաղորդման սարքեր (այսուհետև՝ **SCLU**), որոնք տեղակայված են 220 ԿՎ լարման ենթակայաններում և արտադրող կայաններում (բացառությամբ փոքր ՀԵԿսերի և հողմակայանների).

Դ) տարածաշրջանային սերվերները (**SCLU**), որոնք տեղակայված են տարածաշրջանային կենտրոններում և կայանային վարչություններում,

Ե) դյուրակիր համակարգիչներ, որոնք օգտագործվում են հաշվառման տվյալների բազայում տվյալների ներմուծման համար՝ այն դեպքում, երբ բացակայում են կապուղիները կամ հաշվառման տեղակայանքները կահավորված չեն հեռահաղորդակցության սարքավորումներով,

Զ) Հեռահաղորդակցության սարքավորումներ, որոնք ընդգրկում են հաղորդակցման ուղիները դեպի կորպորատիվ ցանցերը, ներառյա՞լ մոդեմները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, RS232 և RS422/485 փոխակերպիչներ:

3.6 Հաշվառման համակարգն ապահովում է՝

Ա) տվյալների պաշտպանվածությունը,

Բ) Էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանցումը դեպի հաշվառման տվյալների բազա,

Գ) Շուկայի մասնակիցների մուտքը **SCLU**ներում գտնվող հաշվառման տվյալների բազա՝ տվյալ Շուկայի մասնակցին վերաբերող տեղեկատվություն ստանալու համար,

Դ) Էլեկտրաէներգիայի (հզորության) քանակի գրանցումը յուրաքանչյուր Հաշվառքի կետում և հաշվարկումը սահմանազատման կետի համար.

3.7 Հաշվառման տվյալների բազան պարունակում է՝

Ա) գրանցումներ Հաշվառքի կետով անցած էլեկտրաէներգիայի և հզորության մասին՝ հիմնված 30 րոպեանոց միջակայքի համադրումով ստացված տվյալներից,

Բ) տեղեկատվություն հաշվառման տվյալների բազայում կատարված գրանցումներում եղած փոփոխությունների և դրանք իրականացնողի մասին,

գ) տվյալներ յուրաքանչյուր Զափիչ համալիրի վերաբերյալ (լարման և հոսանքի տրանսֆորմատորների, Հաշվիչների տեխնիկական տվյալները, գործարանային համարները և այլն):

3.8 Զափիչ համալիրի փոխարինման դեպքում, տեղադրված հաշվիչի տվյալները մուտքագրվում են հաշվառման տվյալների բազա Հաշվարկային կենտրոնի համաձայնությամբ:

3.9 Հաշվառման տվյալները՝

ա) գրանցվում են 30 րոպեանոց պարբերականությամբ,

բ) պահպանվում են հաշվառման տվյալների բազայում 13 ամիս, այնուհետև արխիվացվում են և պահպանվում Հաշվարկային կենտրոնում և Շուկայի մասնակիցների մոտ 3 տարի ժամկետով:

4. Հաշվառման համակարգի վարչարարական կառավարումը

4.1 Հաշվառման համակարգի վարչարարական կառավարումն իրականացնում է համակարգի գլխավոր վարչարարի (Հաշվարկային կենտրոնի կողմից նշանակված պատասխանատու անձ[¤] միջոցով):

4.2 Համակարգի գլխավոր վարչարարը կառավարումն իրականացնում է Շուկայի մասնակիցների վարչարարների (Շուկայի մասնակիցների կողմից հաշվառման համակարգի համար նշանակված պատասխանատու անձ) միջոցով:

4.3 Հաշվարկային կենտրոնը պարտավոր է.

4.3.1 Հաշվառման համակարգից օգտվելու իրավասությունը կարգավորելու նպատակով կազմել և համապատասխան ձևակերպմամբ Շուկայի մասնակիցներից յուրաքանչյուրի վարչարարին տրամադրել Հաշվառման համակարգից օգտվելու նշանաբանների սանդղակը.

4.3.2 Շուկայի մասնակիցներին պարբերաբար տրամադրել Հաշվառման համակարգում կիրառվող ծրագրային փաթեթներում ներառված փոփոխությունները (Էլեկտրոնային տեսքով,

4.3.3 24 ժամվա ընթացքում տեղեկացնել և համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Շուկայի մասնակիցներից յուրաքանչյուրին՝ իրեն վերաբերող տվյալներում

կատարված փոփոխությունների և գլխավոր սերվերում դրանց մուտքագրման փաստի վերաբերյալ:

4.4 Շուկայի մասնակիցները պարտավոր են.

4.4.1 SCLCՍԱՆԵՐՈՒՄ կազմել հաշվեկշռային հաշվարկային խմբեր՝ գլխավոր սերվերում կազմված հաշվարկային խմբերին համապատասխան,

4.4.2 հետևել իրենց սպասարկման շրջանակներում ընդգրկված հաշվառքի սարքերի (հաշվիչներ, հոսանքի և լարման տրանսֆորմատորներ, տվյալների հավաքագրումն ու հաղորդումն ապահովող սարքեր, ներքին կապի գծեր, համակարգիչներ) աշխատունակությանը,

4.4.3 նախորդ կետում նշված սարքերի աշխատանքում խափանումներ հայտնաբերելու դեպքում 24 ժամվա ընթացքում հեռախոսագրով, ֆաքսով կամ էլեկտրոնային փոստով հայտնել Հաշվարկային կենտրոնին:

4.5 Հաշվարկային կենտրոնը և Շուկայի մասնակիցները պատասխանատվություն են կրում Հաշվառման համակարգում կիրառվող նշանաբանների գաղտնիության պահպանման համար:

4.6 Շուկայի մասնակիցները պարտավոր են ոչ ոչ քան երեք ամիսը մեկ անգամ արխիվացնել իրենց պատասխանատվության ներքո գտնվող SCLCՍԱՆԵՐՈՒՄ եղած հաշվառման տվյալների բազան:

5. Հաշվառման տվյալների հավաքագրումը և պարբերականությունը

5.1 Հաշվառման տվյալների հավաքագրումն իրականացնում է Հաշվարկային կենտրոնը՝ Հաշվառման համակարգի միջոցով: Հաշվարկային կենտրոնը պատասխանատվություն է կրում իր անգործության հետևանքով հաշվառման տվյալների սահմանված ժամանակից ոչ և սխալ հավաքագրման համար:

5.2 Հաշվառման տվյալների հավաքագրման նպատակով Հաշվարկային կենտրոնը ապահովում է համակարգային, գլխավոր սերվերների և SCLCՍԱՆԵՐԻ ծրագրային ապահովման փաթեթների աշխատունակ վիճակը, տվյալների հավաքագրումը SCLCՍԱՆԵՐԻց դեպի համակարգային սերվեր:

5.3 Շուկայի մասնակիցները (բացառությամբ փոքր ՀԵԿԱԵՐԻ և հողմակայանների) ապահովում են.

5.3.1 Հաշվառման համակարգի մեջ ներառված Հաշվիչներից տվյալների հավաքագրումը SCLU,

5.3.2 SCLUների, ինչպես նաև հաշվառման տվյալների հեռահաղորդակցության համար ծառայող սարքերի աշխատունակ վիճակը:

5.4 Հաշվառման տվյալներն ամրագրվում են Հաշվարկային ժամանակահատվածի կեսին և ավարտին՝ ժամը 24:00-ի դրությամբ ու հավաքագրվում դրան հաջորդող երեք օրացուցային օրերի ընթացքում:

5.5 Հաշվարկային կենտրոնը հաշվարկային ժամանակահատվածի կեսին և ավարտին՝ իինք օրացուցային օրվա ընթացքում, կազմում է Էլեկտրաէներգետիկական համակարգի Էլեկտրաէներգիայի փաստացի հաշվեկշիռ՝ ըստ սահմանազատման և Հաշվառքի կետերի:

5.6 Էլեկտրաէներգիայի հաշվեկշիռ կազմման համար հիմք են ընդունվում Հաշվարկային կենտրոնի և Շուկայի մասնակիցների միջև փոխհամաձայնեցված հաշվառման հաշվարկային խմբերը, որոնք անփոփոխ պետք է կրկնվեն համակարգային և տարածաշրջանային սերվերներում: Հաշվարկային խմբերի ցանկացած փոփոխություն կարող է իրականացվել միայն կողմերի փոխհամաձայնությամբ:

5.7 Հաշվառքի կետերում տեղակայված Հաշվիչների աշխատանքը ստուգելու նպատակով Հաշվարկային կենտրոնն իրավասու է հաշվառման համակարգի մեջ ընդգրկված Հաշվիչներից կազմել ցանկացած հաշվարկային խմբեր:

5.8 Շուկայի մասնակիցներն իրենց վերաբերող հաշվառման տվյալների հավաստիությանը կասկածելու դեպքում իրավունք ունեն մուտք գործել Պայմանագրի մյուս կողմի տարածք՝ նրանց միջև Պայմանագրով ամրագրված Հաշվառքի կետերից դյուրակիր համակարգիչների օգնությամբ տվյալների ընթերցման նպատակով:

6. Զափիչ համալիրների տեղադրումը և փոխարինումը

6.1 Հաշվիչների տեղադրման կամ փոխարինման դեպքում Պայմանագրային կողմերը կազմում են համապատասխան արձանագրություն (ակտ): Տեղադրված Հաշվիչների սեղմակաշարերը կապարակնքվում են Հաշվարկային կենտրոնի կողմից՝ Պայմանագրային կողմերի ներկայությամբ:

6.2 Հաշվիչների սեղմակաշարերի կնիքները հանվում են Հաշվարկային կենտրոնի կողմից Պայմանագրային կողմերի ներկայությամբ:

6.3 Բացառիկ դեպքերում (վթարների վերացում և այլն) կնիքները հանվում են Շուկայի մասնակիցների կողմից՝ անմիջապես տեղեկացնելով Հաշվարկային կենտրոնին: Հաշվիչների վերակապարակնքումն իրականացվում է սույն կարգի համաձայն՝ 48 ժամվա ընթացքում:

6.4 Լարման և հոսաքի տրանսֆորմատորների տեղադրումը կամ փոխարինումը իրականացվում է Շուկայի մասնակիցների կողմից՝ տեխնիկական ստանդարտների պահանջներին համապատասխան, տեղեկացնելով Հաշվարկային կենտրոնին:

6.5 ԷՄՇ ավտոմատացված համակարգի տարրերի փոխարինման կամ ընդլայնման նպատակով նոր տարրերը տեղադրվում են Շուկայի մասնակիցների կողմից Հաշվարկային կենտրոնի հետ համաձայնեցված նախագծով:

6.6 Հաշվարկային կենտրոնն իրականացնում է՝

ա) նոր միացվող հզորությունների Զափիչ միջոցների տեղադրման, ստուգման, կապարակնքման և օրինականացման աշխատնաքների կոորդինացումը,

բ) արտադրողների և հաղորդողի առևտրային և վերստուգիչ Հաշվիչների լարորատոր ստուգման աշխատանքները:

գ) Հաշվառման համակարգում գրանցված Հաշվիչների ստուգաչափման աշխատանքների կոորդինացումը,

դ) Հաշվառման համակարգում գրանցված Հաշվիչների ծրագրավորման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում նոր ծրագրերի կազմման և Հաշվիչների վերածրագրավորման աշխատանքները:

6.7 Հաշվիչների ստուգաչափման և կապարակնքման աշխատանքներն իրականացնում է չափագիտական մարմինը կամ նրա կողմից տրված համապատասխան լիցենզիա ունեցող իրավաբանական անձը:

7. Զափիչ միջոցների շահագործումը

7.1 Զափիչ միջոցները և նրանց կազմում ընդգրկված սարքերը, շահագործվում են համապատասխան տեխնիկական անձնագրերով և տեխնիկական սպասարկման հրահանգներով ամրագրված պահանջների համաձայն:

7.2 Հաշվարկային կենտրոնն՝ անհրաժեշտության դեպքում, Հաշվառման համակարգի շահագործման բարելավման նպատակով հաստատում է Հաշվառման համակարգի կամ նրա առանձին օղակների շահագործման հրահանգները: